

# ՍԱՂՄՈՍ 56

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

| NASB  | NKJV                       | NRSV                                 | TEV                       | NJB                                   |
|---|----------------------------|--------------------------------------|---------------------------|---------------------------------------|
| Աղաչանք ազատության համար, և գոհունակ վստահություն Աստծուն   | Նեղիչներից ազատվելու աղոթք | Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք | Աստծուն վստահության աղոթք | Վստահություն Աստծուն                  |
| <u>MT ներածություն</u>  |                            |                                      |                           |                                       |
| Գլխավոր երաժշտին, Դավթի մտորումները, երբ Գեթում գերվեց փղշտացիների կողմից: «Հեռավոր երկրների լուռ աղավնու» եղանակով |                            |                                      |                           |                                       |
| 56:1-7  | 56:1-2<br>56:3-4<br>56:5-7 | 56:1-4<br>56:5-7                     | 56:1-4<br>56:5-7          | 56:1-2<br>56:3-4<br>56:5-6<br>56:7-9ա |
| 56:8-13   | 56:8-11<br>56:12-13        | 56:8-11<br>56:12-13                  | 56:8-11<br>56:12-13       | 56:9բ-11<br>56:12-13                  |

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 56:1-7

- <sup>1</sup>Ողորմա՛ճ եղիր իմ հանդեպ, ո՛վ Աստված,  
Քանի որ մարդն ինձ կույ է տալու,  
Ամեն օր պատերազմելով ինձ նեղում է:  
<sup>2</sup>Թշնամիներս ամեն օր ուզում են ինձ կույ տալ,  
Քանի որ շատ են իմ դեմ կռվողները, ո՛վ Դու, Բարձրյալ:  
<sup>3</sup>Երբ վախենամ, Քեզ եմ վստահելու:  
<sup>4</sup>Աստծով փառաբանելու եմ Նրա խոսքը.  
Աստծուն եմ վստահել, չպիտի վախենամ.  
Մարմինն ինձ ի՞նչ կարող է անել:  
<sup>5</sup>Ամեն օր իմ խոսքերը ծռում են.  
Իմ մասին նրանց բոլոր խորհուրդները չարիքի համար են:  
<sup>6</sup>Միասին հավաքվում են թաքնվում են,  
Դիտում են իմ ոտնահետքերը, երբ իմ անձին են սպասում:  
<sup>7</sup>Մի՞թե նրանք անօրենությամբ կարող են ազատվել:  
Բարկությամբ ժողովուրդներին ցա՛ճ գցիր, ո՛վ Աստված:

**56:1-7 «ողորմաճ եղիր»** Այս ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (BDB 335, KB 334) սկսում է շատ Սաղմոսներ (տես՝ Սաղմ. 4:1, 6:2, 51:1, 57:1 /երկու անգամ/, 86:3, 123:3 /երկու անգամ/ և այն հանդիպում է շատ այլ սաղմոսներում էլ (տես՝ Սաղմ. 9:13, 25:16, 26:11, 27:7, 30:10, 31:9, 41:4,10, 86:16, 119:29, 58, 132): Այն հաճախ համադրվում է՝

1. թշնամիներից ազատվելու հետ
2. մեղքերի թողության հետ

Այս Սաղմոսում աղոթքը առաջին կետի պատճառով է: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է սաղմոսերգուն նկարագրում իր հակառակորդներին (Սաղմ. 56:1-2, 5-6):

1. ուզում են կույ տալ իրեն (կամ «անհագ», նույն բաղաձայններով), Սաղմ. 56:2 – BDB 983 II, KB 1375, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 56:3, Սաղմ. 57:3, Եզեկ. 36:3, Ամոկա 8:4
2. նրա դեմ են կռվում, Սաղմ. 56:2 – BDB 535, KB 526, *Qal* ԴԵՐԲԱՅ
3. ծռում են (բառացի՝ «վրդովեցնում են» նրան) նրա խոսքերը, Սաղմ. 56:5 – BDB 780, KB 864, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
4. նրանց բոլոր խորհուրդները չարիքի համար են, Սաղմ. 56:5- ԲԱՅ չկա
5. հարձակվում են (բառացի՝ «կռիվ են գցում»), Սաղմ. 56:6 – BDB 158, KB 184, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 59:3, 140:3
6. դարանակալել (բառացի՝ «թաքնվել»), Սաղմ. 56:6 – MT տալիս *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, *Qere Qal* ԱՆԿԱՏԱՐ BDB 860, KB 1049
7. դիտում են նրա ոտնահետքերը (բառացի՝ «կրունկները»), Սաղմ. 56:6 – BDB 1036, KB 1581, *Qal* ԱՆԿԱՏԱՐ (այսինքն՝ որպեսզի հարմար ժամանակին և վայրում հարձակվեն), տես՝ Սաղմ. 71:10
8. նրա անձին էին սպասում, որպեսզի սպանեն, Սաղմ. 56:6 – BDB 875, KB 1083, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 119:95

**56:1 «ամեն օր»** Նկատե՛ք որ այս դարձվածքը շարունակական հարձակումների համար կիրառվում է Սաղմ. 56:1,2 և 5-ում:

Սաղմոսերգուն սպասում է այն օրվան (տես՝ Սաղմ. 56:3), երբ նրա թշնամիները հետ կդառնան, Սաղմ. 56:9ա: Աստվածաշնչում «օր» բառը կարող է վերաբերել՝

1. ժամանակավոր դատաստանին
2. Էսկատոլոգիական դատաստանին

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՅԴ ՕՐԸ



|                      |                 |
|----------------------|-----------------|
| <b>NASB լուսանցք</b> | «կռվող մարդիկ»  |
| <b>NRSV</b>          | «թշնամիներ»     |
| <b>TEV</b>           | «ախոյաններ»     |
| <b>JPSOA</b>         | «հակառակորդներ» |
| <b>REB</b>           | «հարձակվողներ»  |

MT տալիս է «կռվել» ԲԱՅԻ *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ (BDB 535, KB 526): Այս նույն խումբը կոչվում են «մարդիկ» (այսինքն՝ թույլ մարդիկ, BDB 60):

**56:2 «հպարտորեն»** MT տալիս է «բարձրություն» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 928): Այն թարգմանվում է երկու կերպ:

1. հակառակորդների ամբարտավանությունը, NASB, NIV
2. Աստծո անվան մի մասը՝
  - ա. «Բարձրյալ», LXX, NKJV, NRSV, REB
  - բ. «Ամենակարող Տեր», TEV
  - գ. «Ո՛վ Մեծարված», JPSOA

**56:3** Սաղմոս 56:3 կրկնվող թեմա է. դարձյալ կրկնվում է Սաղմ .56:4 և 11-ում:

1. ես վախենում եմ – BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. իմ վստահությունը Աստծո վրա եմ դնում – BDB 105, KB 120, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ . 4:5-ի գրառումը
3. այն ժամանակ ես չեմ վախենա, Սաղմ .56:4,11, տես՝ Սաղմ . 112:7-8, 118:6

**56:4 «Աստծով փառաբանելու եմ Նրա խոսքը»** Նկատե՛ք, որ սա կրկնվում է Սաղմ .56:10-ում, գուգահեռաբար, որտեղ *Liphil* և ՅԱՀՎԵ անունները կապված են:

«Խոսքը» (BDB 182) գուգահեռ է «Քո ուխտերը» (BDB 623) խոսքին, Սաղմ .56:12-ում: Շատ տերմիններ կան, որոնք կիրառվում են բնութագրելու ՅԱՀՎԵԻ հայտնությունները:

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

❖ «մարմինն ինձ ինչ կարող է անել» Այս նույն հայտարարությունը արտահայտվում է Սաղմ . 118:6 և մեջբերվում Եբր . 13:6-ում: Այս գաղափարը նաև երևում է Հռոմ . 8:31, 35-39-ում հոգևոր ուժերի թեմայի առնչությամբ:

**56:7** Թշնամական և շարունակական հարձակումների պատճառով սաղմոսերգուն խնդրում է Աստծուն դատաստան տեսնել իր թշնամիների հանդեպ:

1. ցած գցիր (բառացի՝ «իրենց հանցանքների համար, մի՞թե պետք է ազատեն», NKJV) – BDB 812, KB 930, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  - ա. ԲԱՅԸ նշանակում է «ազատել», տես՝ Սաղմ . 17:13, 18:3, այնպես որ այստեղ այն պետք է որ հարց լինի կամ էլ թարգմանությունը պետք է ավելացնի բացասում՝ «հանցանքները» շտկելով (REB, LXX):
  - բ. հնարավոր է նաև փոխել «ազատությունը»՝ BDB 812, ԵՆՓ «կշռելու» հետ՝ BDB 814, ԾԼՓ
2. Ժողովուրդներին ցած գցիր – BDB 432, KB 434, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ . 55:23: Չարմանալի է, որ «ժողովուրդները», որը սովորաբար կիրառվում է ազգային խմբերի համար (NEB, REB), կիրառվում է այստեղ: Մի քանի տեսություններ կան՝
  - ա. սա թագավորական Սաղմոս է և վերաբերում է այլ ազգերին
  - բ. սա իսրայելական՝ հուդայական կյանքն է օտարների մեջ

գ. պարզապես իր թշնամիներին նկատի ունենալու մի կերպ է, որոնք գործում են որպես ուխտից դուրս մարդիկ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 56:8-13**

**<sup>8</sup>Դու հաշվի ես առնում իմ թափառական շրջելը,  
Արցունքներս դի՛ր Քո շշի մեջ,  
Մի՛թե դրանք Քո գրքում չեն:  
<sup>9</sup>Երբ Քեզ աղաղակեմ, այն ժամանակ թշնամիներս ետ կդառնան.  
Սա ես գիտեմ, քանի որ Աստված ինձ հետ է:  
<sup>10</sup>Աստծով եմ գովելու Իր խոսքը,  
ՏԻՐՈՋՈՎ եմ գովելու Իր խոսքը:  
<sup>11</sup>Աստծո վրա է իմ հույսը, չափտի վախենամ.  
Մարդն ինձ ի՞նչ կարող է անել:  
<sup>12</sup>Ուխտ ունեմ Քեզ հետ,  
Օրհնության պատարագներ եմ մատուցելու Քեզ, ո՛վ Աստված,  
<sup>13</sup>Որովհետև իմ անձը մահվանից ազատագրեցիր.  
Ոտքերս էլ անկումից չե՛ս ազատի,  
Որպեսզի Աստծո առջև քայլեմ կենդանյաց լույսի մեջ:**

**56:8-13** Այս պարբերությունը գործ ունի սաղմոսերգուի հավատքի վստահության հետ, որ Աստված իր հետ է և իր համար: Մի օր նրա հակառակորդները առերեսվելու են իրենց գործերի հետևանքների հետ (Սաղմ. 56:9):

**56:8** Աստված գիտի, թե ինչի միջոց է անցնում Սաղմոսերգուն (տես՝ Ելից 3:7): Նա իր հավատքի աշխարհայացքն է արտահայտում (այսինքն՝ հիմնված Սուրբ Գրքի խոստումների վրա)՝

1. ԲԱՅՈՎՎ՝ «հաշվի ես առնում» (այսինքն՝ Աստված գիտի) – BDB 707, KB 765, *Qal* ՎԱՂԱԿԱՍԱՐ
2. ԲԱՅՈՎՎ՝ «արցունքներս Քո շշի մեջ դիր» - BDB 962, KB 1321, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այսինքն՝ աղոթքի խնդրանք). փոխաբերություն սաղմոսերգուի իր թշնամիների ձեռքից, խոսքերից կրած չարչարանքների և այն չարիքների հիշատակի համար:
3. Քո գիրքը – «գիրք» բառը (BDB 707) շատ նման է «հաշիվ տալու» (BDB 707) ԲԱՅԻՆ: «Գիրք» սուրբգրային դարձվածք է Աստծո հիշատակի համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՈՆ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ

|                          |                             |
|--------------------------|-----------------------------|
| ❖                        |                             |
| <b>NASB, NKJV, JPSOA</b> | <b>«շրջելը»</b>             |
| <b>NRSV</b>              | <b>«պտտելը»</b>             |
| <b>TEV</b>               | <b>«որքան անհանգստացած»</b> |
| <b>NJB</b>               | <b>«վշտերը»</b>             |
| <b>REB</b>               | <b>«տառապանք»</b>           |

Եբրայերեն ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 627 I) միայն այստեղ է գտնվում: Այն նույն բաղաձայններն են ինչպես «այս ու այն կողմ շարժվելը», «թափառելը», «ճախրել», «սգալ» (BDB 626): «Թափառելու» կիրառությունը կարելի է տեսնել Սաղմ. 36:11, 59:11, 4 Թագ. 21:8-ում: Եբրայերենում արտասանության խաղ կա «թափառել» և «շիշ» բառերի միջև:

❖ «շիշ» Այս բառը (BDB 609) նշանակում է կենդանու կաշվից (ոչխարի) կարված տարա՛ հեղուկների համար (տես՝ Հեսու 9:4, 13, Դատ .4:19, 1 Թագ. 16:20, Սաղմ. 119:83):

**56:9 «երբ կանչում եմ»** Հավանաբար «կանչելը» հավատքի հայտարարություն է՝

1. Սաղմ. 56:9բ
2. Սաղմ. 56:3ա
3. Սաղմ. 56:4ա-բ

Ինչ էլ, որ այն նկատի ունենա, արտահայտում է կամային հավատք: Աստվածաբանական լարվածություն կա Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև: Երկուսն էլ անհրաժեշտ են ուխտի համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Ընտրություն, նախասահմանություն և աստվածաբանական հավասարակշռության անհրաժեշտությունը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

❖ **«սա ես գիտեմ, քանի որ Աստված ինձ հետ է»** Սա երբայերեն «իմանալ» (BDB 393) բառի նշանակությունների հետ կապված բառախաղ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՄԱՆԱԿ

**56:12 «ուխտ»** Սա կարող է լինել Աստծո խոստումները նկատի ունենալու մեկ այլ կերպ (տես՝ Սաղմ . 56:10բ) կամ կարող է վերաբերել այն խոստումներին, որոնք սաղմոսերգուն է Աստծուն տվել: Երբ դրանք կատարվեն, ապա՝

1. պահանջվում է գոհ (տես՝ Սաղմ . 56:12բ)
2. բանավոր փառաբանություն է պահանջվում

Համատեքստում այն կարող է վերաբերել սաղմոսերգուի թշնամիների կողմից մահվան վախերին և հետևաբար նա խնդրում էր Աստծուն, որ փրկի իրեն: Այս խնդրանքում նա ինչ-որ առումով երդում է կատարում: Աստված իրո՞ք փրկեց նրան, այժմ նա պետք է կատարի իր երդումը:

**56:13** Սաղմոսերգուն նշում է մի քանի բան, որ Աստված արել է իր համար:

1. իր անձը փրկել է մահից – BDB 664, KB 717, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ. սա պետք է որ կապ ունենա Սաղմ. 56:6-ի հետ
2. իր ոտքերը պահեց սայթաքելուց և հետևաբար թույլ տվեց իրեն, որ քայլի Աստծո առջև: Աստվածահաճո կյանքը նկարագրվում է որպես մաքուր, բարձրադիր, անարգել ճանապարհ՝ ուղի (տես՝ Սաղմ. 1:1-ի գրառումը): Նրանք «դիտում էին նրա քայլերը» Սաղմ. 56:6-ում, սակայն այժմ Աստված օգնում է նրան քայլելու:

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սաղմոսի սիրտը՝ կենտրոնը, կրկնվող մի խոսք է, ո՞րն է:
2. Բացատրե՛ք «գրքի» դարձվածքը: Քանի՞ «գիրք» է նշում Աստվածաշունչը, որ Աստված ունի:
3. Ինչի՞ն է վերաբերում «այդ օրը» խոսքը:
4. Բացատրե՛ք Սաղմ. 56:10-ը ձեր իսկ բառերով:
5. Ի՞նչ է նշանակում «քայլել Աստծո առաջ»: